

ԵԹՈՎՊԻՈՅ Ն. Կ. ՄԵԾՈՒԹԻՒՆ ՀԱՅԼԷ ՍԵԼԱՍԻԷԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Հինգշաբթի, 13 Հոկտեմբերի առաօտեան. Երուսաղէմ ժամանեց Եթովպիոյ Կայսր Ն. Վեհափառութիւն Հայլէ Սե-լասիէ Առաջին՝ կարն այցելութեան մը համար:

Յոպպէի Դրան առջեւ, ի շարս այլ յարանուանութիւննե-րու, Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ դիմաւորու-



Ն. Կ. Վեհափառութիւնը եւ Պատրիարք Ս. Հայրը
ընդունելութեան միջոցին:

թեան փութացած էր Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Եպս. Անէւ-
եան, իր հետ ունենալով Աւագ-Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ.
Նազարեանը:

Ն. Վեհափառութիւնը իր շփախումբով ապա ուզողուե-
ցաւ Ս. Յարութեան Տաճար, որու մուտքին ջերմօրէն դիմաւոր-
եցաւ Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Հօր եւ Գեորշ.
Հուսարարապետ Սրբազանին, ինչպէս նաեւ Ս. Յակոբեանը:
Միաբանութեան անդամներուն կողմէ, որոնք պատկառելի
հիւրը առաջնորդեցին նախ Պատանատեղի, եւ ապա Ս. Գերեզ-
ման՝ ուխտի:

Քիչ անց Վեհապետը այցելեց Բեթղեհէմ, եւ Ս. Ծննդեան
Վանքի մուտքին Պատրիարքաբանիս կողմէ դիմաւորուեցաւ
Գերշ. Տ. Շահէ Եպս. Անէմեանէ եւ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նա-
զարեանէ:

Նոյն օրը, ի պատիւ Ն. Վեհափառութեան, երուսաղէմի
Վսեմափայլ Կառավարիչը մաշկերոյթ մը տուաւ քաղաքիս ին-
քըրֆօնքինէնքըլ պանդոկին մէջ, որուն ներկայ եղաւ Ն. Ամե-
նապատուութիւն Պատրիարք Ս. Հայրը, իր հետ ունենալով
Հոգշ. Աւագ-Թարգման Հայր Սուրբը:

